https://doi.org/10.46991/hc.2023.20.2.180

About the Issue of Labor Migration from RA to RF

Hovhannes Aleksanyan
https://orcid.org/0009-0000-4018-0614
PhD in History, Chair of the History of Armenia's Neighboring Countries, YSU,
Institute of History NAS RA
hovhannesaleqsanyan@ysu.am

Keywords: *Armenia, Russia, migration, emigration, economy, work, employment, statistics, migrant.*

Beginnig from 1990s due to socio-economic and regional political issues, large volumes of emigration and labor migration from Armenia have been recorded, which is worrying. The main direction of labor migration and emigration is Russian Federation, and this issue requires practical solutions to be overcomed.

The solution of the problem of unemployment in Republic of Armenia, and therefore overcoming emigration, requires making large capital investments in the economy, improving the economic policy, and developing a complex program for the development of the economy.

The involvement of the economic (inverstmens) and human potential of the Armenian diaspora (repatriation) can be key to reducing the volume of labor migration and overcoming emigration, improving the country's economic capabilities and human resources.

In this context, it is important to review and activate the economy - labour market - educational system chain under state control and not to lose working resources at a young and able-bodied age.

ՀՀ-ից ՌԴ աշխատանքային միգրացիայի հիմնախնդրի շուրջ

Հովհաննես Ալեքսանյան
պ.գ.թ., ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոն,
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Հիմնաբառեր՝ *Հայաստան, Ռուսաստան, միգրացիա, արտագաղթ, տնտեսություն, աշխատանք, զբաղվածություն, վիճակագրություն, միգրանտ*:

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 180-186.

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 25.10.2023
Revised: 16.11.2023
Accepted: 15.12.2023

© The Author(s) 2023

1990-ական թվականներից սկսած, սոցիալ-տնտեսական և տարածաշրջանային քաղաքական խնդիրներից ելնելով, Հայաստանից արձանագրվել են մտահոգիչ ծավալների արտագաղթ և աշխատանքային միգրացիա: Աշխատանքային միգրացիայի և արտագաղթի հիմնական ուղղությունը Ռուսաստանի Դաշնությունն է, և այս իրավիճակի հաղթահարումը գործնական լուծումներ է պահանջում:

ՀՀ-ում գործազրկության խնդրի լուծումը, հետևաբար՝ արտագաղթի հաղթահարումը պահանջում է տնտեսության մեջ մեծ ներդրումներ, տնտեսական քաղաքականության բարելավում, տնտեսական ոլորտի զարգացման համալիր ծրագրի մշակում:

Հայկական սփյուռքի տնտեսական (ներդրումային) և մարդկային ներուժի (հայրենադարձության) օգտագործումը կարող է առանցքային լինել աշխատանքային միգրացիայի ծավալների կրճատման և արտագաղթի հաղթահարման, երկրի տնտեսական հնարավորությունների և մարդկային ռեսուրսների որակի բարելավման համար:

Այս համատեքստում կարևոր է վերանայել և ակտիվացնել պետության կողմից վերահսկվող տնտեսություն-աշխատաշուկա-կրթական համակարգ շղթան և չկորցնել երիտասարդ և աշխատունակ տարիքի մարդկային ռեսուրսները:

О вопросе трудовой миграции из РА в РФ

Ованнес Алексанян
к.и.н., кафедры истории сопредельных стран Армении ЕГУ
Институт истории НАН РА

Ключевые слова: *Армения, Россия, миграция, эмиграция, экономика, работа, занятость, статистика, мигрант.*

Начиная с 1990-х годов из-за социально-экономических и региональных политических проблем зафиксированы большие объемы эмиграции и трудовой миграции из Армении, что вызывает беспокойство. Основным направлением трудовой миграции и эмиграции является РФ, и преодоление данной ситуации требует практических решений.

Решение проблемы безработицы в РА, а значит и преодоление эмиграции, требует крупных капиталовложений в экономику, совершенствования экономической политики, разработки комплексной программы развития экономической сферы.

Задействование экономического (инвестиции) и человеческого потенциала армянской диаспоры (репатриация) может стать ключом к сокращению объема трудовой миграции и преодолению эмиграции, улучшению экономических возможностей страны и качества человеческих ресурсов.

В данном контексте важно пересмотреть и активизировать подконтрольную государству цепочку экономика – рынок труда - образовательная система и не потерять человеческие ресурсы в молодом и трудоспособном возрасте.

Ներածություն: Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումից հետո ստեղծված սոցիալ-տնտեսական ու տարածաշրջանային ռազմաքաղաքական նոր իրողությունների պայմաններում, Հայաստանից սկիզբ է առել զանգվածային աշխատանքային միգրացիա և արտագաղթ, որի գլխավոր ուղղություններից մեկը Ռուսաստանի Դաշնությունն է, իսկ հետխորհրդային մյուս երկրներից՝ Ուկրաինան, Բելոռուսը և Ղազախստանը:

ՀՀ բնակչության թվաքանակը հետանկախության ավելի քան երեսուն տարիներին դրսևորել է շարունակական նվազում, որը ցածր ծնելիության ու շարունակվող արտագաղթի պատճառով գտնվում է 3 մլն-ի շրջանում, միևնույն ժամանակ, ակնհայտ է դարձել բնակչության սեռատարիքային խմբերի էական փոփոխությունը: Այս գործընթացները ստացել են մեծ ծավալները, որոնց հաղթահարումն առանցքային նշանակություն ունի ՀՀ բնականոն կենսագործունեության ապահովման համար:

ՀՀ-ից ՌԴ աշխատանքային միգրացիայի հիմնախնդրի շուրջ: Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ նախնական տվյալներով կազմել է 2 963.3 մլն (Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ, 2021, 3), 2023 թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել է 2 981.2 մլն {2;4}, 2023 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ 2 993.8 մլն մարդ (Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2023 թվականի ապրիլի 1-ի դրությամբ, 2023, 4):

1990-ական թվականներից Հայաստանի Հանրապետությունից բնակչության տարերային արտագաղթի, աշխատանքային միգրացիայի աճող տեմպերն առաջ են բերել բազմաթիվ մարտահրավերներ, այդ թվում՝ որակյալ աշխատանքային ռեսուրսների պակասի (կորստի), ժողովրդագրական վիճակի վատթարացման, պետության անհամաչափ տարածքային զարգացման, սահմանամերձ բնակավայրերից բնակչության արտագաղթի, ազգային անվտանգության և այլ առումներով:

Հետաքրքիր է մեկ այլ ասպեկտից խնդրին կատարվող անդրադարձը. միգրացիան մի կողմից գնահատվում է որպես աշխատանքի ներքին շուկայի լարվածությունը թուլացնող գործոն, մյուս կողմից՝ դեպի Հայրենիք նույն միգրանտների կողմից դրամական փոխանցումների հնարավորություն (Թադևոսյան և ուրիշ., 2014, 6):

Դրամական փոխանցումները, որպես սոցիալ-տնտեսական զարգացման գործոն, ՀՀ-ում կատարվող ուղիղ ներդրումներից հետո, կարևոր արտաքին ֆինանսավորման աղբյուր են հանդիսացել՝ հսկայական ազդեցություն ապահովելով աշխատանքի ներքին շուկայի, սպառման ու ներմուծման, պետական բյուջեի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների վրա:

Այս իմաստով ևս ՌԴ-ից ստացվող փոխանցումները գերակշռող են. Այսպես, 2017 թ. ՀՀ միայն Ռուսաստանից ստացվել էր դրամական փոխանցումների՝ տրանսֆերտների 80.3%-ը, 2019 թ.՝ 73.7%-ը (Միգրացիոն պատկերը Հայաստանի Հանրապետությունում, 2019 թ., 2021, 26), իսկ 2020 թ.՝ 65%-ը (Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (2018-2021), 2021, 44):

Պաշտոնական վիճակագրության տվյալներով ՀՀ առկա բնակչության թվաքանակը 1991–2011 թթ. նվազել է 21,3%-ով կամ 777,1 հազ. մարդով, ընդ որում դա պայմանավորված է եղել

միայն արտաքին միգրացիայի բացասական մնացորդով՝ 1120,3 հազ. մարդ, քանի որ նշված ժամանակաշրջանում բնական հավելաճի շնորհիվ բնակչության թվաքանակն ավելացել է 343,2 հազ. մարդով:

ՀՀ Ազգային Վիճակագրական Կոմիտեի Ժողովրդագրության և հանրության վիճակագրության բաժնի պետ Կ. Կույումջյանի ներկայացմամբ «1991 թ. ՀՀ բնակչությունը կազմել է ավելի քան 3.5 մլն, իսկ 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 2 մլն 965 հազար, ուստի՝ բնակչության թվաքանակի շուրջ 17 տոկոս նվազում է արձանագրվել: 1991-2011 թթ. ՀՀ բնակչությունը բնական ճանապարհով գրանցված հավելաճը կազմել է շուրջ 400 հազար, ինչը որոշ չափով մեղմել է նույն ժամանակահատվածում գրանցված արտագաղթը՝ շուրջ 950 հազար: 2012-2018 թթ. ՀՀ-ում բնական հավելաճը եղել է 92 հազար, արտագաղթը՝ 150 հազար» (ՀՀ բնակչությունը 1991թ. մինչև 2019թ. նվազել է շուրջ 17 տոկոսով, 02.10.2019):

Իր հերթին հետազոտող Ս. Մանուկյանը նշում է, որ 1992-2018 թթ. Հայաստանն անվերադարձ լքել են շուրջ 1,070,000 մարդ (Մանուկյան, 27.20. 2020), որից միայն **2008-2017 թթ.՝ 373 հզ մարդ:**

Արտագաղթի «ռուսաստանյան» ուղղության հարաբերական մատչելիությունը ու ակտիվությունը կանխորոշված է մի շարք գործոններով՝ տնտեսական (վիզայի, ինչպես նաև դրա ստացման վճարի բացակայությունը, ՌԴ աշխարհագրական մոտիկությունը, ավտոմոբիլային տրանսպորտով հաղորդակցման հասանելիությունը) և սոցիալ-հոգեբանական, քանի որ աշխատանքային ու բնակության միջավայրը բավականաչափ ընկալելի են, իսկ լեզվական արգելքը՝ պրակտիկորեն բացակայում է (Թադևոսյան և ուրիշ., 2014, 33):

Ըստ այդմ, 2000-ական թթ. հայ միգրանտների հոսքերի ընդհուպ 70-80 տոկոս և ավելին բաժին է ընկել ՌԴ-ին և հետխորհրդային մյուս պետություններին միասին վերցրած:

Այսպես, 2008-2013 թթ. ՀՀ-ից կատարված միգրացիայի վերաբերյալ կատարված հետազոտության արդյունքը ցույց է տալիս է, որ միգրացիայի ամենաակտիվ ուղղությունը, ըստ հետազոտության արդյունքների, Ռուսաստանի Դաշնությունն է, որտեղ գտնվում է հիշյալ տարիներին էմիգրացվածների 68,6%-ը (Թադևոսյան և ուրիշ., 2014, 33):

Դեպի ՌԴ աշխատանքային միգրացիայի մեծ տեսակարար կշիռը կարելի է բացատրել այստեղ զբաղվածության լայն հնարավորություններով, ձեռներեցությամբ զբաղվելու և աշխատելու իրավունք ստանալու համեմատաբար դյուրինությամբ, ծառայությունների ոլորտում աշխատանք գտնելու բավարար հնարավորություններով:

Պատահական չէ, որ հայ միգրանտների նպատակների մեջ շեշտակիորեն առանձնանում է աշխատանքի որոնումը: Հայաստանից արտագաղթի պատճառներից գլխավորը զբաղվածության հիմնախնդրի (աշխատատեղերի), մասնագիտական աշխատանքի բացակայության, արժանավայել ապրուստ ապահովող վարձատրությամբ հնարավորությունների պակասն է: Ավելորդ չէ նշել, որ տարբեր տվյալներով, ՀՀ-ից մեկնած միգրանտների շուրջ 1/3-ն ունի բարձրագույն կրթություն:

Արտագաղթը խթանող պատճառներից է դիտվում նաև անհատի զարգացման, պահանջմունքներն և հնարավորությունները դրսևորելու համար բավարար պայմանների բացակայությունը: Տարիներ շարունակ միգրանտների շրջանում ձևավորվել է այն համոզմունքը, որ այդ հնարավորությունները կարող են բավարարվել ՀՀ-ից դուրս:

Այս իրողությունը այլ կերպ, սակայն դրսևորվել է նաև ավելի վաղ շրջանում, քանի որ հետազոտողներ Ա. Վարտիկյանը , Գ. Պողոսյանը (Պողոսյան, 2012, 91), Վ. Խոջաբեկյանը և այլք նշում են, որ դեռևս ԽՍՀՄ տարիներին Հայաստանը աշխատուժի ավելցուկ ուներ և տարեկան շուրջ 50-60 հզ սեզոնային աշխատողներ մեկնում էին Սիբիր, Հեռավոր Արևելք, Կրասնոդար, Ստավրոպոլ և այլ շրջաններ:

Արտագաղթի կարևոր պատճառ է նաև հասարակական վստահության պակասը Հայաստանի զարգացման հեռանկարի, ապագայի հանդեպ: Միայն այս կերպ կարող է բացատրվել Հայաստանից արտագաղթածների թվաքանակի շարունակվող աճը դեպի ՌԴ, որն արձանագրվել է մինչև 2022 թվականը:

Համաձայն ՌԴ դաշնային միգրացիոն ծառայության տվյալների 2014 թ. առաջին կեսին այդ երկրում գտնվել են շուրջ 450 հզ հայ միգրանտներ, որոնց մեծ մասը բնակվել են Մոսկվայում և Մոսկվայի մարզում, Ռոստովի մարզում, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում և հիմնականում աշխատել շինարարության (44.1%), ծառայությունների (27.2%) տրանսպորտի և կապի (12.1%), առևտրի (5.8%) ոլորտներում (Гомцян, 2014, 223):

Հատկանշական է, որ հաճախ տարբերվում են հայկական ու ռուսական աղբյուրների կողմից ՌԴ-ում հայ աշխատանքային միգրանտների թվաքանակի վերաբերյալ նշվող տեղեկատվությունը. այսպես հայկական կողմի տվյալներով այն 2021 թվականին կազմել է շուրջ 80 հզ մարդ, ռուսական կողմի տվյալներով՝ շուրջ 300 հզ մարդ (Меджлумян, 02.05.2022):

Համաձայն ՌԴ ՆԳՆ հրապարակումների, 2017-2019 թթ. Ռուսաստանում միգրացիոն հաշվառման վերցված ՀՀ քաղաքացիների թիվը դանդաղ նվազման միտում է ունեցել (տարեկան 1-2%- ով), իսկ 2020 թ.՝ ՔՈՎԻԴ-19-ով պայմանավորված, նվազել է շուրջ 43%-ով: 2021թ. ընթացքում Ռուսաստանում հաշվառված ՀՀ քաղաքացիների թիվը կրկին զգալիորեն աճել է, սակայն 2019 թ. համեմատ ՌԴ-ում հաշվառվել է շուրջ 9%-ով պակաս ՀՀ քաղաքացի:

Հատկանշական է, որ 2017-2020 թթ. ավելի մեծ տեմպերով կրճատվել է տարվա ընթացքում Ռուսաստանում հաշվառված և հաշվառումից դուրս եկած ՀՀ քաղաքացիների թվի տարբերությունը: 2018-2021 թթ. ՀՀ քաղաքացիների 7-10%-ն է միայն Ռուսաստանում հաշվառվել ըստ բնակության վայրի, իսկ ճնշող մեծամասնությունը՝ ըստ գտնվելու վայրի: Վերջիններս միգրացիոն հաշվառման են վերցվել առավելապես աշխատանքի կամ մասնավոր այցի հիմքով: 2021թ. ՌԴ-ում աշխատանքային կամ քաղաքացիա-իրավական պայմանագրի կնքման ծանուցում է ներկայացրել 138,946 ՀՀ քաղաքացի (Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (2018-2021), 2021, 27):

Այսպիսով, քննարկվող հիմնախնդրի շատ ասպեկտների հաղթահարման տեսանկյունից կարևոր է ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 20-ի N 801-լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը:

Եզրակացություն: Այսպիսով, հիմնահարցի հաղթահարման համար առանցքային են թիրախային խնդիրների ձևակերպումը և դրանց ուղղությամբ լուծումները, նախևառաջ.

ՀՀ-ում գործազրկության հիմնախնդիրը հաղթահարելու, հետևաբար՝ արտագաղթի հաղթահարումը պահանջում են տնտեսության մեջ խոշոր կապիտալ ներդրումներ կատարել,

բարելավել տնտեսական քաղաքականությունը, մշակել տնտեսական ոլորտի զարգացման համալիր ծրագիր:

Արտագաղթը հաղթահարման, երկրի տնտեսական կարողությունների ու մարդկային ռեսուրսների բարելավման համար առանցքային կարող է լինել հայկական սփյուռքի տնտեսական և մարդկային ներուժի /հայրենադարձություն/ ներգրավումը:

Հարկ է մշտապես ավելացնել և գտնել նոր հնարավորություններ ՀՀ-ում ներդնելու խթանող մեխանիզմներ, հատուկ ծրագրեր, որոնք թույլ կտան լուծել այն տնտեսական ու սոցիալական հիմնախնդիրները, որոնց բախվում են հատկապես երիտասարդները:

Պետական վերահսկողության պայմաններում հարկ է վերանայել ու ակտիվացնել տնտեսություն-աշխատաշուկա-կրթական համակարգ շղթան (Դավթյան, 2016, 55-60) և չկորցնել աշխատունակ տարիքում գտնվող աշխատանքային ռեսուրսները:

Գրականության ցանկ

Դավթյան Մ. 2016, Արտագաղթի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, «Տեղեկագիր», N 1, էջ 55-60: Teghekagir 2016 - 1 — OneDrive (sharepoint.com)

Թադևոսյան Զ. և ուրիշ. 2014, Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Երևան, Տնտեսագետ, 80 էջ:

ՀՀ բնակչությունը 1991թ. մինչև 2019թ. նվազել է շուրջ 17 տոկոսով, «Առաջինի լրատվական ալիք», 02.10.2019, https://www.1lurer.am/hy/2019/10/02/%D5%80%D5%80-%D5%A2%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-1991%D5%A9-%D5%B4%D5%AB%D5%B6%D5%B9%D6%87-2019%D5%A9-%D5%B6%D5%BE%D5%A1%D5%A6%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%B7%D5%B8%D6%82%D6%80%D5%BB-17-%D5%BF%D5%B8%D5%AF%D5%B8%D5%BD%D5%B8%D5%BE/130395:

Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (2018-2021) 2021, Երևան, 74 էջ, https://reintegrationfacility.eu/wp-content/uploads/2023/12/Armenian-EMP-2018-2021.pdf :

Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ 2021, Վիճակագրական տեղեկագիր, Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե (Արմստատ), Երևան, 10 էջ:

Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2023 թվականի ապրիլի 1-ի դրությամբ 2023, Վիճակագրական տեղեկագիր, Արմստատ (ՀՀ Վիճակագրական կոմիտե), Երևան, 9 էջ:

Մանուկյան Ս. 2020, Հայաստանի բնակչությունը 1827-2018 թթ., «Օրբելի կենտրոն», 27.07.2020, https://orbeli.am/hy/post/514/2020-07-27/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB+%D5%A2%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8+1827-2018%D5%A9%D5%A9:

Միգրացիոն պատկերը Հայաստանի Հանրապետությունում, 2019 թ. (Ըստ 2019 թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության կշռված արդյունքների) 2021, Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե (Արմստատ), Երևան, 30 էջ:

Պողոսյան Գ. 2012, Աշխատանքային միգրացիայի սոցիալ-քաղաքական ազդեցությունները, «Հասարակագիտական մտքի արդի ժամանակաշրջանում», Երևան, «Եվրոպրինտ», էջ 84-100, https://arar.sci.am/dlibra/publication/303420/edition/279016/content?ref=struct:

Гомцян А. 2014, Армянские трудовые мигранты в Российской Федерации: актуальные вопросы адаптации и правового положения, Финансовые исследования № 4 (45), с. 223-225.

Меджлумян А., Армения: трудовые мигранты не торопятся выезжать в Россию на фоне санкций, «Eurasianet», 02.05.2022, https://russian.eurasianet.org/%D0%B0%D1%80%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F-%D1%82%D1%80%D1%83%D0%B4%D0%BE%D0%B2%D1%8B%D0%B5-%D0%BC%D0%B8%D0%B3%D1%80%D0%B0%D0%BD%D1%82%D1%8B-%D0%BD%D0%B5-%D1%82%D0%BE%D1%80%D0%BE%D0%BF%D1%8F%D1%82%D1%81%D1%8F-%D0%B2%D1%8B%D0%B5%D0%B7%D0%B6%D0%B0%D1%82%D1%8C-%D0%B2-%D1%80%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D1%8E-%D0%BD%D0%B0-%D1%84%D0%BE%D0%BD%D0%B5-%D1%81%D0%B0%D0%BD%D0%BA%D1%86%D0%B8%D0%B9: